Մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Արարատ գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոց» , «Գոռավանի միջնակարգ դպրոց» , «Լուսաշողի միջնակարգ դպրոց», «Սուրենավանի միջնակարգ դպրոց», «Պարույր Սևակի հիմնական դպրոց», «Արարատ քաղաքի Ժորես Մկրտչյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց», «Բերդիկի միջնակարգ դպրոց» «Սիսավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների վարչատնտեսական մասի համակարգողների (այսուհետ՝ համակարգող) թափուր տեղերն զբաղեցնելու համար

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N 259-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ հաստատություն) վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգի համաձայն՝

Արարատի «Արարատ գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոց» , «Գոռավանի միջնակարգ դպրոց», «Լուսաշողի միջնակարգ դպրոց», «Սուրենավանի միջնակարգ դպրոց», «Պարույր Սևակի հիմնական դպրոց», «Արարատ քաղաքի Ժորես Մկրտչյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց», «Բերդիկի միջնակարգ դպրոց» «Սիսավանի միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ-ների համակարգողների պաշտոնների թափուր տեղերն զբաղեցնելու համար ընդունվում են հայտեր:

2. Հաստատության համակարգողի պաշտոնն զբաղեցնելու համար հայտ ներկայացնելու պարտադիր պայմաններն են՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.

2) բարձրագույն կրթությունը:

3. Թափուր տեղը համալրելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում (Ձև 2-ին համապատասխան).

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ).

4) «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 18-րդ մասի պահանջներին համապատասխան՝ աշխատանքային ստաժը հավաստող փաստաթուղթ.

5) ինքնակենսագրություն:

4. Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ, իսկ էլեկտրոնային եղանակով ներկայացնելու դեպքում (նշել համապատասխան լիազոր մարմնի էլեկտրոնային փոստի հասցեն) բնօրինակները ներկայացնել հարցազրույցի օրը:

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնում **2024 թվականի նոյեմբերի 29-ից մինչև դեկտեմբերի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 13:00-ը,** բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Հասցե՝ ք. Արտաշատ Օգոստոսի 23/60, հեռ 0235.2-45-11